

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի
Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ո Ւ Մ
Կ Ի Ր Ա Ռ Վ Ո Ղ Մ Ա Ք Ս Ա Յ Ի Ն
Վ Ծ Ա Ր Ն Ե Ր Ը

Դասախոսության տեքստ

Ե Ր Ե Վ Ա Ն
Հեղինակային հրատարակություն
2014

ՀՏԴ 339.543(042.4)
ԳՄԴ 65.9(2)8g7
Գ 673

Հրատարակության և երաշխավորել Հայաստանի
պետական տնտեսագիտական համալսարանի
Ֆինանսներ ամբիոնը և Ֆինանսական
ֆակուլտետի խորհուրդը

Մասն. խմբագիր տ.գ.դ., պրոֆեսոր Ա. Սալմազարյան

Գրախոս՝ տ.գ.թ., դոցենտ Ա. Ժամկոչյան

Գ 673 Գյուլասարյան Մ. Ռ.

Հայաստանի Հանրապետությունում կիրառվող մաքսային
վճարները: Դասախոսության տեքստ/Մ. Գյուլասարյան, ՀՊՏՀ.–
Եր.: Հեղինակային հրատարակություն, 2014.–52 էջ:

ՀՀ մաքսային ծառայությունը, որպես սոցիալ-տնտեսական
ինստիտուտ, պետական մարմինների համակարգում զբաղեցնում է կեն-
տրոնական տեղերից մեկը, քանի որ այն կարգավորում է արտաքին
տնտեսական գործունեության ոլորտում տնտեսական, քաղաքական, իրա-
վական, տեղեկատվական, էներգետիկական և այլ հաղորդակցություններն ու
կապերը՝ դրանով իսկ կայունություն և կանխատեսելիություն հաղորդելով
առևտրային գործընկերների փոխհարաբերություններին: Այս հարթությունում
մաքսային վճարների հաշվարկումը և վճարումը արտաքին տնտեսական
գործունեություն իրականացման կարևորագույն հարցերից են: Հայաստանի
Հանրապետությունում իրականացվող մաքսային բարեփոխումները, ներառյալ
նաև մաքսային վճարների սահմանման և հավաքագրման ոլորտը, ունեն իրենց
առանձնահատկությունները: Մաքսային վճարների գանձումը առաջին հերթին
պետք է առավել արդյունավետ ապահովի արտաքին տնտեսական գործու-
նեության և Հայաստանի Հանրապետության մաքսային տարածքում ապրան-
քաշրջանառության կարգավորման կիրառման գործիքները, ինչպես նաև
ապահովի հայաստանյան շուկայի մասնակցությունը առևտրաքաղաքական
խնդիրների իրագործման և ազգային տնտեսության զարգացման խթանման
հարցերում:

Դասախոսության տեքստի նպատակն է ծանոթացնել ուսանողներին
ՀՀ-ում կիրառվող մաքսային վճարների ձևավորման և գանձման կարգի հետ:

ՀՏԴ 339.543(042.4)

ԳՄԴ 65.9(2)8g7

ISBN 978-9939-0-0994-0

ՀՀ Գրադարան
ԱԴԳՄ Библиотека

30231 - 2014

© Գյուլասարյան Մ. Ռ., 2014

1. ՄԱՔՍԱՅԻՆ ՎՃԱՐՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Հայաստանի Հանրապետության մաքսային մարմինների հիմնական գործառույթներից է մաքսային վճարների որոշումը: Այն կիրառվում է ոչ միայն մաքսային պարտադիր վճարումների հաշվարկների, այլև պետական բյուջեի հաշվեկշիռը կազմելու համար, ինչպես նաև հիմք է ապրանքների ներմուծման դեպքում այլ հարկերի և վճարների հաշվարկման ու գանձման համար, օրինակ՝ ԱԱՀ-ն և բնապահպանական վճարը:

Մաքսային վճարների հաշվարկումը և վճարումն արտաքին տնտեսական գործունեություն իրականացման կարևորագույն հարցերից են: Բազմաթիվ երկրներում մաքսային վճարները հանդիսանում են բյուջեի եկամտային մասի կարևոր բաղադրատարրերը, և մաքսային մարմինների կողմից դրանց գանձումը դիտարկվում է որպես այդ մարմինների կարևորագույն գործառույթներից մեկը: Արտաքին տնտեսական գործունեության մասնակիցների համար մաքսային վճարների վճարումը պարտադիր պայման է հանդիսանում մաքսային սահմանով ապրանքների և տրանսպորտային միջոցների ներմուծման ու արտահանման, ինչպես նաև ապրանքների մաքսային ձևակերպումների հետ կապված այլ գործողությունների իրականացման ժամանակ:

ՀՀ մաքսային օրենսգրքի և այլ իրավական ակտերի համաձայն ՀՀ մաքսային սահմանով ապրանքներ տեղափոխելիս մաքսային մարմինների կողմից գանձվում են մաքսային վճարներ, այդ թվում

1. մաքսատուրքեր.
2. մաքսավճարներ.
3. մաքսային մարմինների կողմից գանձվող օրենքով սահմանված հարկեր, տուրքեր և այլ պարտադիր վճարներ: Արտաքին տնտեսական գործունեության մասնակիցների համար մաքսային մարմինների կողմից գանձվող հարկերը և պարտադիր վճարներն են ավելացված արժեքի հարկը, ակցիզային հարկը, բնապահպանական վճարը և ճանապարհային վճարը:

Մաքսային վճարներից առաջինը *մաքսատուրքերի* գործող համակարգը կարգավորվում է ՀՀ Մաքսային օրենսգրքով, որի համաձայն մաքսատուրքերը ՀՀ մաքսային սահմանով ապրանքների տեղափոխման համար սահմանված կարգով և չափով պետական բյուջե գանձվող պարտադիր վճարներ են: Մաքսատուրքի էությունն ու տնտեսական բովանդակությունը առավել մանրամասն ներկայացված է երկրորդ հարցում:

Մաքսային վճարներից իր կարևորությամբ աչքի են ընկնում *մաքսավճարները* ՀՀ մաքսային օրենսգրքի իմաստով մաքսավճարը սահմանված կարգով և չափով գանձվող, պետական բյուջեում հաշվառվող պարտադիր վճար է, որն օգտագործվում է մաքսային գործի զարգացման և մաքսային մարմինների նյութատեխնիկական ու սոցիալական բազայի ապահովման նպատակով:

Մաքսավճարը Հայաստանի Հանրապետությունում սկսել է գործել ՀՀ կառավարության 1993 թվականի դեկտեմբերի 6-ի «Հայաստանի Հանրապետության մաքսային տուրքերի մասին»

թիվ 615 որոշմամբ, որի համաձայն մաքսային մարմինների կողմից մատուցված ծառայությունների դիմաց մաքսային մարմինները գանձում էին մաքսավճար բեռնամաքսային հայտարարագրում նշված ապրանքի արժեքի 0.15 տոկոսի չափով: ԶՅ կառավարության 1996 թվականի ապրիլի 10-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 1993 թվականի դեկտեմբերի 6-ի թիվ 615 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» թիվ 105 որոշմամբ մաքսային ծառայությունների մատուցման դիմաց գանձվող մաքսավճարը սահմանվեց ապրանքաբեռնային հայտարարագրում նշված ապրանքի մաքսային արժեքի 0.3%-ի չափով: Հետագայում՝ 1998 թվականի դեկտեմբերի 30-ին Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից ընդունվեց «Մաքսավճարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, որի համաձայն մաքսավճարը գանձվում էր հաստատուն վճարի տեսքով որոշակի ծառայությունից օգտվելուց, և կախված չէր ապրանքի մաքսային արժեքից:

Ներկայումս մաքսավճարի գանձման սկզբունքները և դրույքաչափերը սահմանվում են «ԶՅ մաքսային օրենսգրքով», որն ուժի մեջ է մտել 2001թ. հունվարի 1-ից, մասնավորապես, օրենսգրքի 109-113-րդ հոդվածներով:

Այսպես, մաքսավճարը գանձվում է Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների և տրանսպորտային միջոցների, ինչպես նաև բանկերի կողմից տեղափոխվող արժույթի և արտարժույթի մաքսային ձևակերպումների իրականացման, ապրանքների զննման ու հաշվառ-

ման, խողովակաշարերով և էլեկտրահաղորդման գծերով տեղափոխվող ապրանքների նկատմամբ մաքսային հսկողության ու դրանց հաշվառման, մաքսային մարմինների կողմից սահմանված տեղերից և աշխատանքային ժամերից դուրս ապրանքների մաքսային ձևակերպումների կամ դրանց հետ կապված առանձին գործողությունների կատարման, մաքսային մարմինների կողմից փաստաթղթերի (ձևաթղթերի) տրամադրման, Հայաստանի Հանրապետության տարածքով ապրանքների մաքսային ուղեկցման, մաքսային մարմինների կողմից ապրանքների պահպանման, տրանսպորտային միջոցների մաքսային հսկողության համար:

Մաքսավճարից ազատվում են այն ապրանքները, որոնք մուտք են գործում Հայաստանի Հանրապետության մաքսային տարածք մարդասիրական օգնության և բարեգործական ծրագրերի շրջանակներում, ֆիզիկական անձանց կողմից Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով տեղափոխվող այն ապրանքները, որոնց համար սահմանված է մաքսատուրքի արտոնություն, օրենսդրությամբ սահմանված կարգով «ժամանակավոր արտահանում» ռեժիմով արտահանվող և հետագա ներմուծվող մշակութային արժեքները, միջազգային կանոնավոր փոխադրումներ իրականացնող տրանսպորտային միջոցները այդ փոխադրումների իրականացման ժամանակ և ֆիզիկական անձանց կողմից Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով տեղափոխվող` Հայաստանի Հանրապետությունում հաշվառված թեթև մարդատար տրանսպորտային միջոցները:

Հաշվարկվածից ավելի վճարված մաքսավճարի գումարները, վճարողի ցանկությանը, մաքսային մարմինների կողմից հաշվանցվում են մաքսային մարմիններին՝ վճարման ենթակա այլ պարտավորությունների հաշվին, կամ վերադարձվում են ոչ ուշ, քան վերադարձման մասին վճարողի դիմումը ստանալուց հետո 30 օրվա ընթացքում: Ավելի գանձված մաքսավճարի գումարների վերադարձման կամ այլ պարտավորությունների հաշվին հաշվանցման դիմումն ընդունվում է դրանց վճարումից հետո մեկ տարվա ընթացքում: Ապրանքներ տեղափոխող անձանց կողմից չվճարված կամ թերի վճարված մաքսավճարի գումարը մաքսային մարմինների կողմից գանձվում է դրանց վճարման պարտավորության առաջացան պահից երեք տարվա ընթացքում: Մաքսավճարի վճարումն իրականացվում է համապատասխան ծառայությունների մատուցման պահից եռօրյա ժամկետում, ՀՀ դրամով, բայց ապրանքների բացթողման պահից ոչ ուշ:

Մաքսավճարի վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար վճարողից գանձվում է տույժ՝ ժամանակին չնուժված մաքսավճարի գումարի 0,15 տոկոսի չափով, բայց ոչ ավելի, քան 365 օրվա համար:

ՀՀ պետական բյուջեի մաքսային եկամուտների կազմում գերակշիռ տեղ է զբաղեցնում *ավելացված արժեքի հարկը*, որը Հայաստանի Հանրապետությունում գործում է 1993 թվականի հունիսի 1-ից՝ համաձայն ՀՀ Գերագույն խորհրդի կողմից 1993 թվականի հունիսի 30-ին ընդունված «Ավելացված արժեքի

հարկի մասին» օրենքի: Ներմուծվող ապրանքների հարկման համար հարկվող շրջանառությունը որոշելիս հիմք էր ընդունվում ներմուծման արժեքը, որի նկատմամբ կիրառվում էր ավելացված արժեքի հարկի 20% դրույքաչափ: Ինչ վերաբերում է Հայաստանի Հանրապետությունից արտահանվող ապրանքներին, ապա վերջիններիս ավելացված արժեքի հարկը վերադարձվում էր, եթե ՀՀ միջազգային պայմանագրերով այլ կարգ նախատեսված չէր: Սույն օրենքը լի էր բացթողումներով և ներմուծողների կողմից մի շարք կամայականությունների առիթ էր ստեղծում: Այդ բացթողումները վերացվեցին և մի շարք այլ կարևոր դրույթներ իրենց ամրագրումն ստացան ՀՀ Գերագույն խորհրդի կողմից 1993 թվականի հունիսի 30-ին ընդունված «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքն ուժը կորցրած ճանաչող՝ ՀՀ Ազգային ժողովի կողմից 1997 թվականի մայիսի 14-ին ընդունված «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքում, որն ուժի մեջ է մտել 1997 թվականի հուլիսի 1-ից և փոփոխություններով ու լրացումներով հանդերձ գործում է մինչ օրս: Հետագայում մայր օրենքում կատարված լրացումներից և փոփոխություններից հատկանշական է 1997 թվականի սեպտեմբերի 8-ին «Ավելացված արժեքի հարկի մասին Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի ընդունումը, որը գործում է մինչ օրս, որի համաձայն 1997 թվականի հոկտեմբերի 24-ից «Հայաստանի Հանրապետության ներքին տարածք ներմուծվող ապրանքներից ԱԱՀ հաշվարկվում և գանձվում է մաքսային մարմինների կողմից ՀՀ սահմանին, բացառությամբ կազմակերպությունների և անհատ

ձեռնարկատերերի կողմից ներմուծվող այն ապրանքների, որոնց ներմուծման համար մաքսատուրքի դրույքաչափը սահմանված է 0 տոկոս, և որոնք ենթակա չեն ակցիզային հարկով հարկման»:

2001 թվականի հունվարի 1-ից «ՀՀ մաքսային օրենսգրքի» ուժի մեջ մտնելով պայմանավորված՝ նույն ամսաթվից ուժի մեջ մտավ նաև 2000 թվականի դեկտեմբերի 26-ին ընդունված «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքը, որով հստակեցվեցին արտաքին ապրանքաշրջանառության՝ ԱԱՀ-ով հարկվող օբյեկտը և ԱԱՀ-ի գրոյական դրույքաչափի կիրառման դեպքերը: Այսպես, այսուհետև ԱԱՀ-ով հարկվող օբյեկտ է համարվում «ներմուծում ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով ապրանքների ներմուծման պահին հարկվող շրջանառությունը՝ նախկինում ուղղակի ապրանքների ներմուծման պահին հարկվող շրջանառության փոխարեն, և ԱԱՀ-ի գրոյական դրույքաչափ է կիրառվում «արտահանում ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով արտահանվող ապրանքների հարկվող շրջանառության նկատմամբ՝ նախկինում ուղղակի արտահանվող ապրանքների հարկվող շրջանառության նկատմամբ:

Այսպիսով, 1997թ. հուլիսի 1-ից գործողության մեջ դրված «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ ավելացված արժեքի հարկն անուղղակի հարկ է, որը վճարվում (գանձվում) է պետական բյուջե՝ ապրանքների ներմուծման, Հայաստանի Հանրապետություն տարածքում

դրանց արտադրության ու շրջանառության, ինչպես նաև ծառայությունների մատուցման բոլոր փուլերում:

Ավելացված արժեքի հարկը բյուջեի հարկային եկամուտների կազմում զգալի տեսակարար կշիռ կազմող հարկատեսակներից է: Պետական բյուջեի համալրման առումով այն համարվում է առավել կարևոր, բայց գործնական կիրառման ժամանակ բարդ հաշվարկվող հարկային վճար:

ՀՀ ներմուծվող ապրանքների համար ԱԱՀ-ով հարկվող շրջանառություն է համարվում մաքսատուրքի 0 տոկոս դրույքաչափ ունեցող ներմուծվող ապրանքների համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկված մաքսային արժեքի, մաքսատուրքով հարկվող ապրանքների համար մաքսային արժեքի և գանձվող մաքսատուրքի, ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների համար մաքսային արժեքի և գանձվող ակցիզային հարկի, իսկ մաքսատուրքով և ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների համար մաքսային արժեքի, մաքսատուրքի և գանձվող ակցիզային հարկի գումարը:

Ելնելով վերոգրյալից ՀՀ ներմուծվող ապրանքների համար ԱԱՀ-ի գումարի հաշվարկը կարելի է ներկայացնել հետևյալ բանաձևերով.

1. մաքսատուրքի 0 տոկոս դրույքաչափով հարկվող, օրենքով հաստատված ցանկում չընդգրկվող ապրանքների համար՝

$$\text{ԱԱՀգ} = \text{Մա} \times \text{ԴԱԱՀ} / 100,$$

որտեղ

ԱԱՀգ-ն՝ ավելացված արժեքի հարկի գումարն է,

Մա-ն՝ ապրանքների մաքսային արժեքների գումարն է,
ԴԱԱՀ-ն՝ ավելացված արժեքի հարկի գործող դրույթաչափն է,

2. մաքսատուրքով հարկվող ապրանքների համար

$$\text{ԱԱՀ}q = (\text{Մա} + \text{Սգ}) \times \text{ԴԱԱՀ} / 100,$$

որտեղ

Սգ-ն՝ մաքսատուրքի գումարն է,

3. մաքսատուրքով և ակցիզային հարկով հարկվող ապրանքների համար

$$\text{ԱԱՀ}q = (\text{Մա} + \text{Սգ} + \text{Ազ}) \times \text{ԴԱԱՀ} / 100,$$

որտեղ

Ազ-ն՝ ակցիզային հարկի գումարն է,

4. անհատ ձեռնարկատեր չհամարվող ֆիզիկական անձանց համար

$$\text{ԱԱՀ}q = (\text{Մա} - \text{Աք}) \times \text{ԴԱԱՀ} / 100,$$

որտեղ

Աք-ն՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված ներմուծվող ապրանքներից մաքսատուրքով չհարկվող բնափրային կամ գումարային մեծությունն է:

5. անհատ ձեռնարկատեր չհամարվող ֆիզիկական անձանց կողմից ակցիզային հարկով հարկվող ապրանքների համար

$$\text{ԱԱՀ}q = [(\text{Մա} - \text{Աք}) + \text{Ազ}] \times \text{ԴԱԱՀ} / 100:$$

Ինչպես յուրաքանչյուր հարկատեսակ՝ ավելացված արժեքի հարկը նույնպես ունի որոշակի հարկային արտոնություններ, մասանավորապես՝ ԱԱՀ-ով չեն հարկվում.

- «ներմուծում ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմից տարբերվող ՀՀ մաքսային օրենսդրությամբ սահմանված այլ ռեժիմներով տեղափոխվող ապրանքները, բացառությամբ ԱԱՀ վճարող անձանց կողմից օրենսդրությամբ սահմանված կարգով վերամշակման կամ նորոգման նպատակով ՀՀ ներքին տարածքից արտահանված ապրանքների ներմուծման դեպքի, երբ ԱԱՀ-ով հարկվում է դրանց վերամշակման կամ նորոգման արժեքը, իսկ այդ արժեքի որոշման անհնարինության դեպքում՝ ապրանքների վերամշակումից կամ նորոգումից հետո ներմուծման մաքսային արժեքի և դրանց արտահանման ժամանակ հայտարարագրված մաքսային արժեքի տարբերությունը,
- կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից ներմուծվող օրենքով հաստատված ցանկում ընդգրկված այն ապրանքները, որոնց ներմուծման համար մաքսատուրքի դրույքաչափը սահմանված է 0 տոկոս, և որոնք ենթակա չեն ակցիզային հարկով հարկման,
- ֆիզիկական անձանց կողմից օրենքով սահմանված անձնական օգտագործման իրերի ներմուծումը,

- ՀՀ մշտական բնակության ժամանող քաղաքացիների անձնական գույքի ներմուծումը,
- ՀՀ տարածք ներմուծվող մշակութային արժեքները,
- օտարերկրյա պետություններում գործող ՀՀ դիվանագիտական ծառայության մարմիններում ծառայող դիվանագետների, և ՀՀ դիվանագիտական ծառայությանը կից գործող ռազմական, առևտրական և այլ կցորդների, Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու այլ երկրների թեմերում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից հոգևոր ծառայության նշանակված քաղաքացիների կողմից ծառայության ավարտից հետո իրենց անձնական օգտագործման գույքի ներմուծումը,
- դիվանագիտական ներկայացուցիչների և հյուպատոսական հիմնարկների, նրանց հավասարեցված միջազգային, միջկա-ռավարական կազմակերպությունների պաշտոնական օգտագործման նպատակով ներմուծվող ապրանքները:

Բացի այդ, ԱԱՀ վճարող համարվող անձանց կողմից ԱՏԳ ԱԱ 841920000, 841990150, 8422 բացառությամբ 842211000 և 842290100 ծածկագրերի, 8426, 8429, 8430, 8435, 8441, 84431, 8452 բացառությամբ 845210 և 845290000 ծածկագրերի, 8453, 8475, 8475, 8479, 85023100 կամ 870410 ծածկագրերին դասվող ապրանքների մասով մաքսային մարմինների հարշվարկված ՀԱԱՀ-ի վճարների պետական բյուջե վճարման ժամկետները

հետաձգվում են, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի.

1. հայտարարագրման օրվանից մեկ տարի ժամկետով, եթե նշված ծածկագրերին դասվող ներմուծված ապրանքների մաքսային արժեքը պակաս է 70 մլն դրամը,
2. հայտարարագրման օրվանից երկու տարի ժամկետով, եթե նշված ծածկագրերին դասվող ներմուծված ապրանքների մաքսային արժեքը կազմում է 70 մլն դրամ և ավելի,
3. հայտարարագրման օրվանից երեք տարի ժամկետով, եթե նշված ծածկագրերին դասվող ներմուծված ապրանքների մաքսային արժեքը գերազանցում է 300 մլն դրամը:

Իսկ ԱԱՀ վճարողների կողմից ԱՏԳ ԱԱ 250510, 251820, 2836, 3901, 3902, 39033904, 3905, 3906 ծածկագրերին դասվող ապրանքների մասով մաքսային մարմինների հաշվարկած ԱԱՀ-ի գումարների պետական բյուջե վճարման ժամկետը հետաձգվում է հայտարարագրման օրվանից մեկ տարի ժամկետով:

ՀՀ կառավարության որոշմամբ ընտրված կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից ներդրումային ծրագրերի շրջանակներում, 300 մլն դրամը գեազանցող վերոնշյալ ապրանքներից բացի, այլ ապրանքների ներմուծման դեպքում սահմանված կարգով մաքսային մարմինների կողմից հաշվարկված ԱԱՀ-ի գումարների վճարման ժամկետը հետաձգվում է երեք տարի ժամկետով: Սակայն հարկ վճարողի

ցանկությամբ և գրավոր հայտարարությամբ կարող են ԱԱՀ-ի վճարման ժամկետները չհետաձգվել:

ԱԱՀ վճարումն ուշացնելու դեպքում գանձվում է տույժ՝ ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար պակաս մուծված գումարի 0.15 տոկոսի չափով, բայց ոչ ավել, քան 365 օրվա համար:

Մաքսային քաղաքականության արդյունավետության բարձրացման գործում որոշակի տեղ է զբաղեցնում *ակցիզային հարկը*. Այն հանդիսանում է հարկային համակարգի բաղկացուցիչ հարկատեսակներից մեկը և ընկալվում է որպես պետական բյուջե գանձվող և ապրանքի գնի մեջ հիմնականում գերշահույթ կամ բարձր շահութաբերությունն ապահովող ու օտարման համար ներմուծվող կամ արտադրվող ապրանքնատեսակների նկատմամբ: Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում ակցիզային հարկի հաշվարկման և վճարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են 2000թ. հուլիսի 7-ին ընդունված և նույն տարվա օգոստոսի 1-ից գործողության մեջ դրված «Ակցիզային հարկի մասին» ՀՀ օրենքով, ըստ որի ակցիզային հարկը օրենքով սահմանված ապրանքների ներմուծման կամ Հայաստանի Հանրապետության տարածքում այդ ապրանքներն արտադրողների կողմից դրանց օտարման համար օրենքով սահմանված կարգով և չափով պետական բյուջե վճարվող անուղղակի հարկ է: Ակցիզային հարկի հարկման կարևոր առանձնահատկություններից մեկն այն է, որ Հայաստանում տվյալ հարկի հաշվարկման ժամանակ կիրառվում են բացառապես կայուն դրույքաչափեր, որոնք

անկախ ֆինանսական արդյունքների մեծությունից, սահմանվում են հարկման բազայի միավորի նկատմամբ՝ բացարձակ գումարային չափով: Այսպես՝ ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքներն են՝ գարեջուրը, խաղողի և այլ գինիները, սպիրտը (բացառությամբ խաղողի գինեմյութից ստացված կոնյակի սպիրտի) և սպիրտային խմիչքները, ծխախոտի արդյունաբերական փոխարինիչները, սիգարները, սիգարե-լաները և սիգարետները ծխախոտով կամ դրա փոխարինիչ-ներով, բենզինը, հում նավթը և նավթամթերքները, դիզելային վառելիքը, նավթային գազերը և գազանման այլ ածխաջրածինները (բացառությամբ բնական գազի):

Մաքսային մարմինների կողմից ակցիզային հարկով չեն հարկվում՝

1. «ներմուծում ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմից տարբերվող՝ ՀՀ մաքսային օրենսդրությամբ սահմանված այլ ռեժիմներով տեղափոխվող ապրանքները,
2. օրենսդրությամբ սահմանված կարգով բռնագրավված, պետությանը հանձնված տիրա-զուրկ և ժառանգության իրավունքով պետությանն անցած ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների ներմուծումն ու օտարումը,
3. մաքսային օրենսդրությամբ սահմանված՝ ֆիզիկա-կան անձանց կողմից առանց մաքսատուրքի վճարման ՀՀ մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների բնափրային և արժեքային չափերը

չգերազանցող չափով անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց կողմից ՀՀ ներմուծվող ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքները:

Ակցիզային հարկն էական փոփոխությունների և լրացումների ենթարկվեց ՀՀ Ազգային ժողովի կողմից 2010 թվականի հոկտեմբերի 7-ին ընդունված «Ակցիզային հարկի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքով, որոնք հիմնականում կապված են ծխախոտի արտադրանքի, բենզինի և դիզելային վառելիքի՝ հարկման ընդհանուր դաշտին անցման հետ: Այսպես, 2011 թվականի հունվարի 1-ից բենզինի մեկ տոննան հարկվում է 25000 դրամ դրույքաչափով, սակայն վերջինիս և բենզինի մեկ տոննայի համար հաշվարկված ավելացված արժեքի հարկի հանրագումարը 112000 դրամից պակաս լինելու դեպքում ակցիզային հարկն ավելացվում է այն չափով, որպեսզի բենզինի մեկ տոննայի համար գանձվող ակցիզային հարկի և ավելացված արժեքի հարկի հանրագումարը հավասարվի 112000 դրամի: Սրանով, փաստորեն, պահպանվում է բենզինի համար նախկինում գործող հաստատագրված վճարի չափը: Վերոնշյալ փոփոխությունը պահպանում է նաև դիզելային վառելիքի համար նախկինում գործող հաստատագրված վճարի չափը որպես նվազագույն սահման, միաժամանակ այն կախվածության մեջ դնելով նաև վերջինիս մաքսային արժեքից՝ սահմանելով ակցիզային հարկի դրույքաչափը դիզելային վառելիքի մաքսային արժեքի 10 տոկոսի չափով, բայց ոչ պակաս, քան մեկ

տոննայի համար 32500 դրամ: Ինչ վերաբերում է ծխախոտի արտադրանքին, ապա պետք է նշել, որ այն ակցիզային հարկով հարկման դաշտ կանցնի 2014 թվականի հունվարի 1-ից և որի կապակցությամբ փոփոխություններն կառանձնանան հիմնականում ներքին արտադրողների և ներմուծողների համար հավասար մրցակցային դաշտ ստեղծելու առումով՝ միևնույն դրույքաչափեր սահմանելով երկուսի համար էլ:

Մաքսային վճարների հաջորդ խումբը ներկայացնում են **բնապահպանական վճարները**, որոնք Հայաստանի Հանրապետությունում գործում են 1999 թվականի հունվարի 1-ից՝ 1998 թվականի դեկտեմբերի 28-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» ՀՀ օրենքի համաձայն: Այն սահմանեց Հայաստանի Հանրապետությունում բնապահպանական և բնօգտագործման վճարների հասկացությունները, վճարողների շրջանակը, վճարների տեսակները, հաշվարկման և վճարման կարգը, օրենքի խախտման համար պատասխանատվությունը և վճարների հետ կապված այլ հարաբերությունների կարգավորումը: Այսպես, բնապահպանական վճարը բնապահպանական միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ դրամական միջոցների գոյացման նպատակով պետական բյուջե վճարվող պարտադիր վճար է:

Բնապահպանական վճարը գանձվում է ՀՀ ներմուծվող շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների համար՝ ՀՀ մաքսային տարածք ներմուծելիս, ինչպես նաև այլ պետություններում գրանցված տրանսպորտային միջոցներից

Հայաստանի Հանրապետության օդային ավազան վնասակար նյութեր արտանետելու համար:

Մաքսային մարմինների կողմից գանձվում են հետևյալ բնապահպանական վճարները.

ա. այլ պետություններում գրանցված ՀՀ մուտք գործող տրանսպորտային միջոցներից ՀՀ օդային ավազան վնասակար նյութերի արտանետման համար վճարը,

բ. շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների համար վճար:

Այլ պետություններում գրանցված ՀՀ մուտք գործող տրանսպորտային միջոցներից ՀՀ օդային ավազան վնասակար նյութերի արտանետման դիմաց վճարը հաշվարկվում և գանձվում է ՀՀ տարածք մուտք գործելու պահին, յուրաքանչյուր մուտքի համար մեկ անգամ՝ ըստ ավտոմեքենայի տեսակի և բեռնատարողության:

Հայաստանի Հանրապետության ներմուծվող, շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների համար վճարը հաշվարկվում է այդ ապրանքների մաքսային արժեքի նկատմամբ՝ տոկոսներով և գանձվում ապրանքները ՀՀ մաքսային սահմանով ներմուծելիս:

Այլ պետություններում գրանցված տրանսպորտային միջոցներից օդային ավազան վնասակար նյութեր արտանետելու համար վճարից ազատվում են դիվանագիտական և հյուպատոսական ներկայացուցչությունները, ՀՀ մարդասիրական օգնության և բարեգործական ծրագրերի շրջանակներում փոխադրում իրականացնողները, Ռուսաստանի

Դաշնության զինված ուժերը: Իսկ շրջակա միջավայրին վնաս պատճառող ներմուծվող ապրանքների համար վճարից ազատվում են ՀՀ տարածքով տարանցիկ փոխադրվող ապրանքները:

Բնապահպանական վճարի վճարումն ուշացնելու դեպքում գանձվում է տույժ՝ ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար պակաս մուծված գումարի 0.2 տոկոսի չափով, բայց ոչ ավել, քան 365 օրվա համար:

Մաքսային վճարների վերջին խումբը ներկայացնում են **ճանապարհային վճարները**, որոնք Հայաստանի Հանրապետությունում գործում են 1998 թվականի մարտի 28-ից՝ ՀՀ Ազգային ժողովի կողմից 1998 թվականի մարտի 3-ին ընդունված «ճանապարհային վճարի մասին» ՀՀ օրենքով, որով սահմանվեցին ճանապարհային վճարի հասկացությունը, վճարողների շրջանակը, վճարի տեսակները, դրույքաչափերը, հաշվարկման և գանձման կարգը, կարգավորվեցին ճանապարհային վճարի հետ կապված այլ հարաբերություններ: Այսպիսով՝ ճանապարհային վճարը Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհների շինարարության, նորոգման և պահպանման աշխատանքները կազմակերպելու ու իրականացնելու համար անհրաժեշտ դրամական միջոցների գոյացման նպատակով սահմանված կարգով և չափով պետական բյուջե վճարվող պարտադիր վճար է: Արտաքին տնտեսական հարաբերություններում ճանապարհային վճար վճարողներ են համարվում տրանսպորտային

միջոցների սեփականատերերը, որոնք վճարում են ճանապարհային վճար այլ պետություններում գրանցված տրանսպորտային միջոցներով ավտոմոբիլային ճանապարհներից օգտվելու համար, ժանրաքաշ ավտոտրանսպորտային միջոցներով ավտոմոբիլային ճանապարհներով երթևեկելու համար և մեծ եզրաչափերով ավտոտրանսպորտային միջոցներով ավտոմոբիլային ճանապարհներով երթևեկելու համար:

Այլ պետություններում գրանցված տրանսպորտային միջոցներով ավտոմոբիլային ճանապարհներից օգտվելու համար վճարը հաշվարկվում և պետական բյուջե է մուծվում այդ տրանսպորտային միջոցները Հայաստանի Հանրապետության տարածք մուտք գործելիս՝ բացառությամբ հետևյալ դեպքի, երբ այլ պետություններում գրանցված տրանսպորտային միջոցը տասնհինգից ավելի օր գտնվել է Հայաստանի Հանրապետության տարածքում, ապա յուրաքանչյուր հաջորդ տասնհինգ օրվա կամ ավելի պակաս ժամկետի համար ավտոմոբիլային ճանապարհներից օգտվելու համար վճարը հաշվարկվում և պետական բյուջե է մուծվում Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվելու ժամկետը լրանալուց հետո՝ հինգ օրվա ընթացքում:

Տասնհինգ օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետություն մեկից ավելի անգամ մուտք գործելու դեպքում այլ պետություններում գրանցված տրանսպորտային միջոցներով ավտոմոբիլային ճանապարհներից օգտվելու համար վճարը գանձվում է յուրաքանչյուր մուտքի համար:

Հայաստանի Հանրապետության տարածքից այլ պետություններում գրանցված տրանսպորտային միջոցների ելքի դեպքում Հայաստանի Հանրապետության մաքսային մարմինները ստուգում են ավտոմոբիլային ճանապարհներից օգտվելու համար վճարի մուծված լինելը: Ճանապարհային վճարի պակաս մուծված լինելու դեպքում Հայաստանի Հանրապետության մաքսային մարմինները պակաս մուծված ճանապարհային վճարի և դրա վճարումն ուշացնելու համար հաշվարկված տույժերի գումարները գանձում են այդ տրանսպորտային միջոցների ելքի ժամանակ:

Ինչպես բնապահպանական վճարի, այնպես էլ այս վճարի դեպքում այլ պետություններում գրանցված տրանսպորտային միջոցներով ավտոմոբիլային ճանապարհներից օգտվելու վճարից ազատվում են ՀՀ-ում հավատարմագրված օտարերկրյա դիվանագիտական ներկայացուցչությունների և հյուպատոսական հիմնարկների ամձնակազմերը իրենց ամձնական և պաշտոնական օգտագործման տրասպորտային միջացների համար, ավտոմոբիլային տրասպորտով ՀՀ տարածք մարդասիրական և տեխնիկական օգնությունների, բարեգործական ծրագրերի շրջանակներում բեռներ փոխադրող վճար վճարողները՝ այդ փոխադրումների համար, ՀՀ-ում տեղակայված Ռուսաստանի Դաշնության ռազմակայաններ բեռներ և զինվորներ փոխադրող վճար վճարողները այդ փոխադրումների համար, ՀՀ նախագահի, ՀՀ Ազգային ժողովի, ՀՀ կառավարության, ՀՀ նախարարությունների և գերատեսչությունների հրավերով ՀՀ տարածք մուտք գործող տրասպորտային միջոցների

սեփականատերերը և ՀՀ սահմանակից պետությունների ՀՀ սահմանամերձ շրջաններում գրանցված տրանսպորտային միջոցներով ՀՀ մուտք գործող վճար վճարողները:

Ճանապարհային վճարի վճարումն ուշացնելու համար գանձվում է տույժ՝ ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար պակաս մուծված գումարի 0.25 տոկոսի չափով, բայց ոչ ավել, քան նպակաս մուծված վճարի գումարը:

2. ՄԱՔՍԱՏՈՒՐՔԻ ԷՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Մաքսատուրքերը Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով ապրանքների տեղափոխման համար ՀՀ մաքսային օրենսգրքով սահմանված կարգով և չափով պետական բյուջե վճարվող պարտադիր վճարներ են: Մաքսատուրքերի տեսակները սահմանված են Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսգրքի 100, 101-րդ հոդվածներով, իսկ դրանց դրույքաչափերը 102-րդ հոդվածով: ԱՀԿ-ին անդամակցության շրջանակներում Հայաստանի Հանրապետությունը հնարավորության ունի մի շարք ապրանքատեսակների ներմուծման համար մաքսատուրքի դրույքաչափը սահմանել մինչև 15 տոկոս: Գծապատկերում 1-ում ներկայացված են մաքսատուրքի գործող տարատեսակները ՀՀ-ում:

Մաքսատուրքերն ըստ
գործառնական բնույթի

.....→	արտահանման՝ վճարվում են Հայաստանի Հանրապետության մաքսային տարածքից արտահանվող ապրանքների համար ¹
→	ներմուծման՝ վճարվում են Հայաստանի Հանրապետության մաքսային տարածք ներմուծվող ապրանքների համար ²
.....→	սեզոնային՝ վճարվում են տարվա որոշակի ժամանակահատվածում առանձին ապրանքներ Հայաստանի Հանրապետության մաքսային տարածքից արտահանելու կամ այդ տարածք ներմուծելու համար ³

Մաքսատուրքերն ըստ
հաշվարկման
մեթոդների

.....▶

արժեքային՝
(ադվալորային)
հաշվարկվում են
տոկոսներով՝ հարկման
ենթակա ապրանքների
մաքսային արժեքի
նկատմամբ

▶

⋮

յուրահատուկ
(հաստատագրված)՝
հաշվարկվում են կայուն
դրույթաչափով՝ հարկման
ենթակա ապրանքների
չափման միավորի համար

▶

խառը՝ զուգակցվում են
արժեքային և յուրահատուկ
(հաստատագրված)
մաքսատուրքերը

Հայաստանի
Հանրապետության
ոնտեսության շահերը
պաշտպանելու և
տնտեսական
գործունեությունը
խրախուսելու
նկատառումներից
ելնելով կարող են
սահմանվել

նշված նկատառումներից ելնելով կարող են սահմանվել նպատակային մաքսատուրքեր, որոնք են.	
<p>հակազդման՝ կիրառվում են ի պատասխան ՀՀ հանդեպ առանձին անձանց, պետությունների կամ նրանց միությունների խտրական գործողությունների</p>	<p>խրախուսական՝ կիրառվում են առանձին երկրներից ներմուծվող ապրանքների նկատմամբ սահմանված մաքսատուրքերը նվազեցնելու նպատակով</p>

¹ ներկայումս սահմանված է մաքսատուրքի 0 % դրույքաչափ

² ներկայումս սահմանված է մաքսատուրքի 0% և 10% դրույքաչափ

³ ներկայումս նախատեսված չեն

Գծապատկեր 1: Մաքսատուրքերի գործող տարատեսակները ՀՀ-ում

Պետք է նշել, որ ամբողջ սահմանային շրջանառությունը չի հարկվում մաքսատուրքով: Առանձին ապրանքներ, կախված դրանց տեսակից, ծագման երկրից, մատնանշված մաքսային ռեժիմից և այլ գործիքներից ազատվում են մաքսատուրքի

վճարումից: Սակայն եթե որոշակի ապրանքն ենթակա է մաքսատուրքով հարկման, ապա այն կարող է տեղափոխվել մաքսային սահմանով միայն համապատասխան մաքսատուրքերի վճարումից հետո:

Ֆիզիկական անձինք կարող են առանց մաքսատուրք վճարելու որպես ուղեկցող բեռ ՀՀ մաքսային սահմանով տեղափոխել ապրանքներ, որոնց ներմուծման համար մաքսատուրքի դրույթաչափը սահմանված չէ 0 տոկոս և որոնց ընդհանուր քաշը չի գերազանցում 50 կիլոգրամը, իսկ ընդհանուր մաքսային արժեքը 150 հազ. դրամը: Իսկ փոստային և սուրհանդակային առաքումներով տեղափոխվող ապրանքների համար համապատասխանաբար 20 կիլոգրամը և 150 հազ. դրամը: Նույն անձը վերոնշյալ արտոնությունից 180 օրվա ընթացքում կարող է օգտվել մեկ անգամ, բացառությամբ ՀՀ կառավրության որոշումների հիման վրա ստեղծվող սահմաններձ առևտրի շուկաների, երբ նույն անձը նախատեսված ատոնությունից մեկ ամսվա ընթացքում կարող է օգտվել մեկ անգամ: Ֆիզիկական անձինք կարող են նաև առանց մաքսատուրքի վճարման ՀՀ մաքսային սահմանով տեղափոխել իրենց վրա կրվող կամ ուղեբեռում գտնվող անձնական օգտագործման իրերը: Որպես այդպիսիք դիտվում են այն ապրանքները, որոնք չունեն գործարանային փաթեթավորում, պիտակավորում և գտնվում են ուղեկցվող ուղեբեռում, կամ ֆիզիկական անձինք կրում են իրենց վրա ՀՀ մաքսային սահմանը հատելու պահին: Մաքսատուրքի գծով արտոնություն է գործում ինչպես ՀՀ մշտական բնակության ժամանող ֆիզիկական անձանց համար, ովքեր այդ արտոնությունից կարող են օգտվել հինգ տարվա

ընթացքում մեկ անգամ, այնպես էլ ՀՀ մաքսային սահմանով ժառանգական գույք տեղափոխող ֆիզիկական անձանց համար, ովքեր պարտավոր են մաքսային մարմիններին ներկայացնել ժառանգության մասին համապատասխան փաստաթղթեր: Այդ անձինք նույնպես ազատվում են մաքսատուրքի վճարման պարտականությունից:

Հաշվարկվածից ավելի վճարված մաքսատուրքի գումարները, վճարողի ցանկությամբ, մաքսային մարմինների կողմից հաշվանցվում են մաքսային մարմիններին վճարման ենթակա այլ պարտավորությունների հաշվին, կամ վերադարձվում են ոչ ուշ, քան վերադարձման մասին վճարողի դիմումը ստանալուց հետո 30 օրվա ընթացքում: Ավելի գանձված մաքսատուրքի գումարների վերադարձման կամ այլ պարտավորությունների հաշվին հաշվանցման դիմումն ընդունվում է դրանց վճարումից հետո երկու տարվա ընթացքում: Ապրանքներ տեղափոխող անձանց կողմից չվճարված կամ թերի վճարված մաքսատուրքի գումարը մաքսային մարմինների կողմից գանձվում է դրանց վճարման պարտավորության առաջացան պահից երեք տարվա ընթացքում: Մաքսատուրքի վճարումը սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար վճարողից գանձվում է տույժ՝ ժամանակին չվճարված մաքսատուրքի գումարի 0.15 տոկոսի չափով, բայց ոչ ավելի, քան 365 օրվա համար:

Մաքսային մարմինների կողմից մաքսատուրքի հաշվարկումն իրականացվում է հայտարարագրի ներկայացման օրվա դրությամբ, իսկ վճարումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով ապրանքների տեղա-

փոխման օրվանից տասնօրյա ժամկետում՝ ՀՀ դրամով:

Մաքսատուրքի վճարումից ազատվում են՝ «տարանցիկ փոխադրում», «ժամանակավոր ներմուծում», «ժամանակավոր արտահանում», «ժամանակավոր ներմուծում՝ վերանշակման համար», «ժամանակավոր արտահանում՝ վերանշակման համար», «ներմուծում մաքսային պահեստ», «ներմուծում ազատ մաքսային պահեստ», «վերաներմուծում» և «վերաարտահանում» (բացառությամբ օրենսգրքով սահմանված դեպքերի), «ոչնչացում», «ներմուծում անմաքս առևտրի խանութ» , «ներմուծում ազատ տնտեսական գոտի», «սեփականությունից հրաժարում հօգուտ պետության» ռեժիմներով բաց թողնվող ապրանքները, այն տրանսպորտային միջոցները, որոնցով կանոնավոր կերպով իրականացվում են բեռների, ուղեբեռների և ուղևորների միջպետական փոխադրումները, ինչպես նաև այն գործիքները, վառելանյութը, պարենային ապրանքները, որոնք կարող են անհրաժեշտ լինել ճանապարհին, միջանկյալ կանգառներում կամ հիշյալ տրանսպորտային միջոցների անսարքությունները վերացնելու համար, արժույթը, արտարժույթը և արժեթղթերը, այն ապրանքները, որոնք ներմուծվում են Հայաստանի Հանրապետության մաքսային տարածք մարդասիրական օգնության և բարեգործական ծրագրերի շրջանակներում: Առևտրային կազմակերպությունների կողմից իրենց կանոնադրական հիմնադրամի համալրմանն ուղղված ՀՀ կառավարության կողմից սահմանված ցանկում ընդգրկված ապրանքները: Տվյալ արտոնությունից օգտվելուց հետո 3 տարվա ընթացքում դրանց օտարման դեպքում մաքսատուրքի գումարը, ներառյալ դրա վճարումն ուշացնելու համար հաշվարկված

տույժերի գանձումը, իրականացվում է մաքսային օրենսգրքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով:

Մաքսային վճարներից, բացառությամբ մաքսավճարի, ազատվում է նաև ցուցահանդեսների, միջազգային տոնավաճառների կամ նմանատիպ միջոցառումների շրջանակներում ՀՀ կառավարության սահմանած նմուշային քանակությամբ ապրանքների ներմուծումը:

Մաքսատուրքի էությունը բացահայտելու համար անհրաժեշտ է նախ և առաջ պարզել, թե ինչ է այն, ի վերջո, տու՞րք, թե՞ հարկ:

Մի շարք հեղինակներ գտնում են, որ մաքսատուրքը պետության տարածքում գանձվող տուրքի տեսակ է: Մասնավորապես, Լ.Ա.Դավիդովան մաքսատուրքը դիտարկում է որպես պետական մարմինների կողմից իրավաբանորեն նշանակալի գործողությունների կատարման համար գանձվող վճար:¹ Համանման կարծիքի են նաև Ե.Յու.Գրաչևան, Մ.Պ.Շեստակովան, Է.Դ.Սոկոլովան, Լ.Գ.Բարանովան:² Մաքսատուրքի հարկային բնույթի հետ համաձայն չէ ակադեմիկոս Ն.Ի.Խիմիչևը:³ Մաքսատուրքը, որպես ոչ հարկային եկամուտ, է

¹ Финансовое право. Учебник. М.: БЕК.1995, Химичева Н.И., Давыдова Л.А. и др; с.324

² Финансовое право России. М.: Новый юрист.1997, Грачева Е.Ю. Соколова Э.Д. с.66

³ М.: БЕК. 1997, с.188-192. Советское финансовое право. М.: Юридическая литература. 1982, Химичева Н.И. Налоговое право.с.168

դիտարկում է նաև պրոֆ.Ս.Դ.Ցիպկինը «Խորհրդային ֆինանսական իրավունք» դասագրքում:⁴

Մինչդեռ մյուս հեղինակները մաքսատուրքը դիտարկում են որպես հարկային վճար: Օրինակ՝ Ա.Ն.Կոզիրինը մաքսատուրքը դիտարկում է որպես անուղղակի հարկերի տարատեսակ:⁵ Որպես հարկ մաքսատուրքը դիտարկում են նաև Ա.Վ.Բրիզգալինը, Ա.Ս.Սունինը, Դ.Գ.Չերնիկը, Վ.Յու.Պրեսնյակովը, Վ.Վ.Գլուխովը և Ի.Վ.Դոլդեն:⁶ Արտասահմանցի հեղինակները նույնպես մատնանշում են մաքսատուրքի հարկային բնույթը: Մասնավորապես, ֆրանսիացի իրավաբանները մաքսատուրքն սահմանում են որպես այնպիսի հարկ, որը սակագնային և մաքսային օրենսդրության համաձայն առնչվում է ապրանքին՝ դրա ներմուծման ժամանակ:⁷

Ակադեմիկոս Ն.Ի.Խիմիչևն իր տեսակետը հիմնավորում է հետևյալ կերպ. «Մաքսատուրքն, ինչպես նաև պետական տուրքը, տարբերվում է հարկից, թեև որոշ ընդհանրություններ ունի իր համապարատադիր բնույթով, բյուջե փոխանցման առումով և պայմանականորեն հարկային համակարգում ներառվելու առումով, որն, ինչպես և շատ այլ վճարներ, հարկեր չեն»: Ի տարբերություն հարկերի, որոնք անհատապես անհատուցելի են, մաքսատուրքի վճարումը կապված է տուրքը

⁴ Советское финансовое право М.: Юридическая литература. 1982, Козырин А.Н., Шахмаметьев А.А. и др.с.168

⁵ Комментарий к Таможенному кодексу РФ. М.: Спарк. 1996. с.161

⁶ История финансовой мысли и политики налогов. М.: ИНФРА-М. 1996. Пушкарева В.М. с.168

⁷ Налоговая система во Франции. Российско-Французская Серия "Информационные и Учебные материалы" М.: 1993. N.2. с.31

վճարած անձի կողմից ապրանքի ներմուծման կամ արտահանման փաստի հետ, մաքսային սահմանով տեղափոխելու հետ, ինչն ուղեկցվում է որոշակի բարիքներից օգտվելու գործընթացով:

Մաքսատուրքը, ըստ էության, նման իրավունքից օգտվելու դիմաց որոշակի վճար է, այսինքն ունի անհատապես հատուցելի բնույթ: Բացի այդ, եթե հարկերին բնորոշ է սահմանված ժամկետներում վճարման կանոնավորությունը, ապա մաքսատուրքին դա բնորոշ չէ, քանի որ դրա վճարման պարտականությունն առաջանում է մաքսային սահմանով ապրանքների տեղափոխման իրավունք ստանալու առնչությամբ: Մյուս առանձնահատկությունն այն է, որ օրենսդրորեն ամրագրված է այլ անձանց կողմից մաքսատուրքի վճարման հնարավորությունը, որոնք այդ հարցերի շուրջ կարող են ինքնուրույն փոխգործակցել մաքսային մարմինների հետ: Մինչդեռ հարկային օրենսդրության մեջ բացակայում է նման հնարավորությունը:⁸

Սակայն, մեր կարծիքով, մաքսատուրքը չի կարելի դիտարկել որպես ապրանքների ներմուծման կամ արտահանման վճար, քանի որ այն ծառայությունների մատուցման վճար չէ: Երկրորդ փաստարկն առնչվում է մաքսատուրքի վճարման կանոնավորությանը: Ինչպես հայտնի է, հարկերը բաժանվում են կանոնավոր և միանվագ հարկերի: Կանոնավոր հարկերը գանձվում են գույքի տիրապետման ողջ ընթացքում կամ հարկատուի կողմից եկամուտ ապահովող գործունեության

⁸ Налоговое право. М.: БЕК. 1997, Химичев Н.И. с.189

որոշակի տեսակով զբաղվելու դեպքում, օրինակ՝ ավելացված արժեքի հարկը, հողի հարկը, ֆիզիկական անձանց եկամտահարկը և այլն: Մինչդեռ, միանվագ հարկերի վճարումը կապված է ինչ-որ իրադարձությունների հետ, որոնք միավորված չեն մեկ համակարգում: Մաքսատուրքը դասվում է հենց միանվագ հարկերի շարքին, դրա վճարումը կապված է ապրանքների ներմուծման փաստի հետ: Եվ վերջապես, ինչ վերաբերում է երրորդ անձանց մաքսատուրքի վճարման պարտականության հնարավորությանը, մաքսատուրքի ոչ հարկային բնույթի վերաբերյալ նման փաստարկն այդքան էլ հիմնավորված չէ, քանի որ մաքսային օրենսդրությունն ենթադրում է երրորդ անձանց կողմից ոչ միայն մաքսատուրքի, այլև՝ այլ մաքսային վճարների, այդ թվում՝ ավելացված արժեքի հարկի և ակցիզների վճարման հնարավորություն:

Վեճը համակարծիք ենք այն դիրքորոշման հետ, որ մաքսատուրքը պետք է դասել հարկերի շարքին:

Մաքսատուրքն անուղղակի հարկի տարատեսակ է, որով հարկվում է մաքսային սահմանով ապրանքների արտաքին առևտրային շրջանառությունը:

Մաքսատուրքին բնորոշ են հարկերի բոլոր հիմնական բնութագրիչները.

- մաքսատուրքի վճարումը կրում է համապարտադիր բնույթ և ապահովվում է պետական-իշխանական հարկադրանքով, մաքսատուրքը որևէ ծառայության մատուցման վճար չէ,

մաքսատուրքի վճարումները նախատեսված չեն որոշակի պետական ծախսերի ֆինանսավորման համար:

Մաքսասակագնային հարաբերությունների իրավական կարգավորումը կրում է միակողմանի բնույթ և բացառում է մաքսասակագնային իրավահարաբերությունների սուբյեկտների՝ հարկման չափի, հիմքերի ու ժամկետների և այլ կողմերի առնչությամբ պայմանավորվածություն ձեռք բերելու հնարավորությունը:

Մաքսատուրքերի միակողմանի նշանակման սկզբունքին չի հակասում պետության և գործարարների միջև, այսպես կոչված, հարկային պայմանագրերի կնքման պրակտիկան: Նման համաձայնագրերի առարկա են հարկային արտոնությունների տրամադրումը մասնավոր ձեռներեցներին սոցիալ-տնտեսական պետական ծրագրերի մասնակցության խթանման նպատակով:

Մաքսատուրքի տնտեսական էությունն առավել հստակորեն զանազանվում է մաքսատուրքի և մաքսավճարի համադրման ժամանակ: Մաքսավճարը ՀՀ մաքսային օրենսգրքով սահմանված կարգով և չափով գանձվող պետական բյուջեում հաշվառվող պարտադիր վճար է, որն օգտագործվում է մաքսային գործի զարգացման և մաքսային մարմինների նյութատեխնիկական և սոցիալական բազայի ապահովման նպատակով: Դրանք առավելապես կապված են մաքսային ձևակերպման տարբեր միջոցառումների իրականացման հետ:

Մաքսատուրքին հատուկ են հարկի բոլոր հիմնական տարրերը:

Մաքսատուրքով հարկման սուբյեկտը հայտարարատուն է: Մաքսային օրենսդրության համաձայն՝ հայտարարատու է համարվում ապրանքներ տեղափոխող կամ մաքսային բրոքեր /միջնորդ/ հանդիսացող անձը, որը մաքսային մարմիններում հայտարարագրում և ներկայացնում է ապրանքներն ու տրանսպորտային միջոցները:

Անձինք են համարվում պետության մաքսային օրենսդրությամբ կարգավորվող հարաբերությունների մասնակիցները և պոտենցիալ մասնակիցները: Իսկ ապրանքներ տեղափոխող անձ է համարվում ապրանքների սեփականատեր, գնորդ հանդիսացող կամ ապրանքների նկատմամբ տիրապետման կամ օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքներն իր անունից մաքսային օրենսգրքով նախատեսված կարգով տնօրինման լիազորություններով օժտված անձը:

Հարկի հաջորդ տարրը դրա վճարման ժամկետն է: Մաքսատուրքերը, հարկերը և մաքսային ձևակերպման համար մաքսավճարները վճարվում են մաքսային հայտարարագրի ընդունմանը զուգահեռ կամ դրանից առաջ: Եթե մաքսային հայտարարագիրը չի ներկայացվել ՀՀ մաքսային օրենսգրքով սահմանված ժամկետներում, ապա մաքսավճարների վճարման ժամկետները հաշվարկվում են մաքսային հայտարարագրի ներկայացման սահմանված ժամկետը լրանալու օրվանից:

Բացառիկ դեպքերում մաքսային մարմիններին կարող է տրվել ապրանքներին առնչվող մաքսատուրքի և հարկերի վճարման ժամկետի հետաձգման հնարավորություն:

Հարկի տարրերին է առնչվում նաև դրա վճարման կարգը: Մաքսային օրենսդրությունը սահմանել է մաքսային մարմինների

կողմից գանձվող հարկերի վճարման հատուկ կարգ: Մաքսատուրքերը վճարվում են ապրանքի մաքսային ձևակերպում իրականացնող մաքսային մարմնին:

Մաքսատուրքերը մաքսային մարմնին կարող են վճարվել ինչպես անկանխիկ, այնպես էլ՝ կանխիկ ՀՀ օրենսդրությամբ սահմանված գումարների սահմաններում: Բանկային բոլոր փոխանցումները, որոնք ստացվում են մաքսային մարմնի հաշիվներին, պետք է ձևակերպվեն վճարման հանձնարականներով կամ վճարային այլ փաստաթղթերով՝ ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված կարգով:

Կարևորվում է նաև այն հարցի պարզաբանումը, թե հարկերի որ խմբին է, մասնավորապես, դասվում մաքսատուրքը: Մաքսատուրքը դասվում է.

-- անուղղակի հարկերին /սպառման հարկեր, քանի որ ի վերջո վճարվում են ապրանքների սպառողների կողմից, որոնք ապրանքը ձեռք են բերում անուղղակի հարկով արտացոլված գնով/,

ամրակցված հարկերին՝ որպես պետական բյուջեի եկամուտների համալրման աղբյուր,

պետական հարկերին, քանի որ մաքսատուրքի սահմանումը և գործողության մեջ դնելը կատարվում է ՀՀ Ազգային ժողովի կողմից ,

ընդհանուր հարկերին, քանի որ նպատակ չունի ծածկելու որոշակի ինչ-որ ծախսեր,

միանգամյա հարկերին, քանի որ դրանց վճարումը կապված է ապրանքների ներմուծման փաստի հետ:

Մաքսատուրքերը կարևոր դեր են կատարում հայաստանյան շուկայի պայմաններին՝ արտասահմանյան արտադրության ապրանքների և համաշխարհային շուկայի պայմաններին՝ հայրենական արտադրության ապրանքների հարմարեցման ապահովման գործում: Հետևաբար, մաքսատուրքերը ձևավորվում են արտաքին տնտեսական գործունեության պայմանների համաձայն, և միաժամանակ արտացոլում են ազգային տնտեսության առանձնահատ-կությունները: Այլ կերպ ասած, դրանք միավորում են ազգային տնտեսությունը համաշխարհային տնտեսության հետ, ազգային շուկան՝ համաշխարհային շուկայի հետ:

Մաքսային քաղաքականության արտաքին ազդեցությունն ենթադրում է մաքսատուրքի դերի բարձրացում՝ որպես առևտրային արտոնությունների ստացման սակարկության պայմանի, ինչը մաքսատուրքը վերածում է երկրի արտաքին առևտրային շրջանառության կարևոր կարգավորչի, երկրների միջև մաքսային հարաբերությունների որպես մաքսային քաղաքականության մեջ մաքսասակագնային և ոչ սակագնային միջոցների ամբողջության, ինչն, իր հերթին, հանգեցնում է արտաքին շուկաներում երկրի դիրքերի ամրապնդմանը, ՀՀ-ում արտոնությունների ստացման մեխանիզմի ճշգրտման հնարավորությանը:

Փորձենք առավել մանրամասն դիտարկել այդ խնդիրն ազգային և համաշխարհային գների օրինակով: Հայտնի է, որ միջազգային առևտրի համաշխարհային պրակտիկայում կիրառվում են համաշխարհային գների շատ տարատեսակներ՝ համաշխարհային բորսաների, աճուրդների, սակարկությունների, համաշխարհային խոշորագույն ընկերությունների գրա-

ցուցակային գներ: Այդ գները կարող են տարբերվել նաև ապրանքների մատակարարման հիմնական պայմաններով, վճարման պայմաններով, վճարման արժույթով:⁹

Համաշխարհային գների ողջ համակցությունից պետք ընտրվեն որոշակի ապրանքների գների այն տեսակները, որոնք կարող են հիմք հանդիսանալ մաքսատուրքի հաշվարկման համար: Մաքսատուրքի հաշվարկման համար համաշխարհային գնի ընտրությունը ենթադրում է ներմուծման արտադրանքի մատակարարների գների վերլուծություն: Արտադրանքի մի շարք տեսակների գծով համաշխարհային գների որոշումը բավականին բարդ խնդիր է, իսկ որոշ դեպքում նման գներն ընդհանրապես բացակայում են, այդ պատճառով անհրաժեշտ է արտասահմանյան առանձին արտադրողների ու մատակարարների գները դիտարկել ներքին և արտաքին շուկաներում, ինչը թույլ է տալիս չեզոքացնել գործարքային գների հնարավոր կրճատման հետևանքները, քանի որ մաքսատուրքի մակարդակն այնքան ավելի բարձր կլինի, որքան ցածր է արտասահմանյան արտադրողի գինը:

Մաքսատուրքի ժամանակին ճշգրտման և մաքսային արժեքի ճիշտ որոշման համար անհրաժեշտ է իրականացնել հայրենական արտադրողների ու ներմուծողների արտադրանքի գների համադրում:

Հայաստանյան տնտեսության ժամանակակից վիճակը շատ դեպքերում որոշում է այդ գների չհիմնավորված տարբե-

⁹ Международные таможенные отношения. Учебное пособие. Изд. Знание. СПб. 2000, Ершов А.Д. с. 34

րությունը, ինչը հանգեցնում է չհիմնավորված բարձր շահույթի ստացմանը արտասահմանյան արտադրանքի իրացման ժամանակ: Նման շահույթի մի մասն անհրաժեշտ է առգրավվել այդ թվում մաքսային խողովակների միջոցով պետական բյուջե ուղղորդելու ճանապարհով: Մաքսային ծառայությունը պետք է պարբերաբար վերլուծի տնտեսական իրավիճակը, հայրենական և ներմուծվող արտադրանքի իրացման գործընթացը: Այլ կերպ ասած, անհրաժեշտ է մշակել ազդակների համապատասխան համակարգ, որը կազդարարի մաքսատուրքերի դրույքաչափերի մակարդակի փոփոխման անհրաժեշտության մասին:

Գների դինամիկայի և մակարդակի փոփոխություններն այդ ազդակներից կարևորագույններն են:

ՀՀ տնտեսության ոչ կայուն վիճակը և գնաճի դեռևս բարձր տեմպերը բացառում են հարաբերականորեն կայուն մաքսատուրքերի կիրառման հնարավորությունը, խելամիտ հովանավորչության արդյունավետ քաղաքականության իրականացումը: Մաքսատուրքերը գնաճի բարձր տեմպերի և ազգային արժույթի փոխարժեքի փոփոխման պայմաններում չեն կարող չճշգրտվել, և նման ճշգրտումները կարող են կատարվել առնվազն տարին մեկ անգամ, իսկ որոշ ապրանքների գծով առավել հաճախ: ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի արհեստական արժևորումն ամենևին չի լուծում մաքսատուրքերի ճշգրտման խնդիրը, և, հակառակը, ստեղծում է անկանխատեսելի փոփոխությունների հնարավորություն տնտեսական կոնյունկտուրայում, որոնք կարող են զգալիորեն ազդել մաքսատուրքերի համակարգի արդյունավետության վրա:

Այսպիսով, մաքսատուրքերի համակարգի վերանայումներն անհրաժեշտ է կատարել հետևյալ գործոնների հաշվառմամբ.

միջազգային ծախքերի աճ,

ազգային ծախքերի աճ,

ԱՄՆ դոլարի և այլ արժույթների նկատմամբ ՀՀ դրամի փոխարժեքի աճ:

Սակագների համակարգի մասնակի ճշգրտման համար անհրաժեշտ է որոշակի մեխանիզմ, որը ժամանակին կբացահայտեր նման ճշգրտումների անհրաժեշտությունը, հիմնավորումներ կպատրաստեր սակագների փոփոխման համար, կկանխատեսեր հայրենական արտադրության, պետական բյուջեի, ներքին շուկայի և ՀՀ արտաքին տնտեսական կապերի համակարգի համար նման փոփոխությունների արդյունքները:

Ապրանքների ներմուծման և արտահանման ժամանակ գանձվող հարկերի և տուրքերի փոփոխությունն առնչվում է արտաքին տնտեսական գործունեության մասնակիցների, պետության, հայրենական արտադրողների ու սպառողների շահերին և առաջացնում է համապատասխան տնտեսական, սոցիալական ու բնապահպանական հետևանքներ և այլն: Նման հետևանքների կանխատեսումն ունի կարևոր նշանակություն հատկապես դրանց փոփոխման տնտեսական պայմանների վերաբերյալ որոշումների կայացման ժամանակ ինչպես այդ որոշումների ընդունման, այնպես էլ իրականացման փուլերում: Նման որոշումների հիմնավորման և ընդունման փուլում դրանց հետևանքների կանխատեսումն ունի կարևոր նշանակություն

դրանց օպտիմալ տարբերակի ընտրության ժամանակ, ինչը թույլ է տալիս առավելագույնի հասցնել օգտակար արդյունքները և նվազագույնի բացասական հետևանքները: Դրանց իրականացման փուլում կանխատեսումը թույլ է տալիս որոշել այն պայմանները, որոնք անհրաժեշտ են լավագույն արդյունքների հասնելու համար:

Մաքսատուրքը կարող է սահմանվել որպես տնտեսական կատեգորիա, որը միաժամանակ ունի հարկային և տնտեսական բաղադրիչ, և որոշակի տնտեսական և սոցիալական պայմաններից կախված հանդես է գալիս որպես հարկային կատեգորիա:

Մաքսատուրքի տնտեսական դերն այն է, որ.


- այն ստեղծում է արժեքային արգելք, որը բարձրացնում է ներմուծվող ապրանքի գինը: Մաքսատուրքը երկրի ներքին շուկա ապրանքի շարժի ժամանակ դրա գնի բարձրացման հիմնական և հաճախ միակ գործոնն է, ինչը թույլ է տալիս ավելացնել ազգային արտադրանքի մրցունակությունը, նպատակադրված ձևով կիրառելով մաքսատուրքեր պետությունը խթանում է տնտեսության որոշակի ճյուղերի զարգացումը:

Մաքսատուրքի առևտրաքաղաքական դերն այն է, որ.

- այն պաշտպանում է տնտեսության որոշակի ճյուղերն արտասահմանյան ապրանքների մրցակցությունից: Ընդ որում պարտադիր չէ, որ դրանք տնտեսական առումով լինեն ավելի թույլ

ճյուղեր կամ ձեռնարկություններ: Երբեմն առավելագույն պաշտպանությունից օգտվում են հատկապես զարգացած, մենաշնորհացված ճյուղերը:

Դիտարկելով մաքսատուրքերի ողջ բազմազանությունը դրանք կարելի է դասակարգել հետևյալ կերպ (տես, գծապատկեր 2).



Գծապատկեր 2 : Մաքսատուրքերի դասակարգում

Մաքսատուրքի տնտեսական բովանդակությունը երկակի է: Մի կողմից այն հանդես է գալիս որպես անուղղակի հարկի տարատեսակ, ինչն արտացոլում է նրա ֆիսկալային գործառույթը, իսկ մյուս կողմից՝ մաքսատուրքն ունի ծագման գնային բնույթ և ունի արժեքային հիմք: Մաքսատուրքի մեծությունն որոշվում է համապատասխան ապրանքների ազգային և միջազգային ծախքերով և գներով:

Մաքսատուրքի որոշման մեթոդաբանական մոտեցումները զգալիորեն տարբերվում են կախված այն բանից, թե արդյոք առկա է ներմուծվող ապրանքի արտադրություն, թե՛ ոչ: Ներմուծվող ապրանքի սեփական արտադրության բացակայության դեպքում մաքսատուրքը հանդես է գալիս որպես հարկային կատեգորիա, որի միջոցով կարգավորվում է վճարունակ պահանջարկի ծավալը:

Ներմուծվող ապրանքի սեփական արտադրության դեպքում մաքսատուրքը հանդես է գալիս որպես գնային կատեգորիա՝ ներքին շուկայում կարգավորելով ներմուծվող և հայրենական ապրանքների գները:


3. ՄԱՔՍԱՅԻՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ՎՐԱ ԱԶԴՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ

Այժմ դիտարկենք այն գործոնները, որոնք ազդում են ներմուծում ազատ շրջանառության համար մաքսային ռեժիմով ՀՀ մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների համար գանձվող մաքսային վճարների մեծության վրա: Ելնելով

վերոնշյալ ռեժիմի հիմնադրույթներից՝ մաքսային սահմանով ապրանքների և տրանսպորտային միջոցների տեղափոխման ժամանակ գանձվում են հետևյալ վճարները՝

- մաքսատուրքեր,
- ավելացված արժեքի հարկ
- ակցիզային հարկ,
- մաքսավճարներ,
- օրենքով սահմանված տուրքեր և այլ պարտադիր վճարներ:

Գծապատկեր 3-ում պատկերված են մաքսային վճարների հաշվարկման վրա ազդող գործոնների համախուճը:



Գծապատկեր 3:Մաքսային վճարների հաշվարկման վրա ազդող գործոնները

Առաջին և ամենագլխավոր գործոնը մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների համար ըստ ԱՏԳ ԱԱ-ի ծածկագրի որոշումն է: Վերջինով է պայմանավորվում որոշակի ապրանքի համար մաքսային սակագնի դրույքաչափի ընտրությունը և տնտեսական քաղաքականության միջոցների կիրառման հնարավորությունը:

Երկրորդ գործոնը, որն ազդում է ապրանքների մաքսային սահմանով տեղափոխման և մաքսային վճարների գանձման հնարավորության վրա, կիրառվում են արդյոք ոչ սակագնային կարգավորման միջոցներ հարցի որոշումն է: Այդ միջոցներին վերաբերում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված արգելքներն ու սահմանափակումները: Արգելքներին և սահմանափակումներին վերաբերում են լիցեզավորումը, քվոտավորումը, հակազդման և խրախուսման մաքսատուրքերի կիրառումը և այլն: Որոշ դեպքերում ապրանքը կարող է ընկնել ոչ սակագնային սահմանափակումների կիրառման տակ, և դրա նկատմամբ կարող են հաշվարկվել հակազդման կամ խրախուսման մաքսատուրքեր:

Հաջորդ գործոնը, որն ազդում է ներմուծման մաքսային սակագների հաշվարկման վրա, հանդիսանում է ապրանքի մաքսային արժեքի որոշումը: Հայտարարագրման ենթակա ապրանքների համար մաքսային սակագնի հաշվարկման հիմքը մաքսային արժեքն է: Այն հիմնականում առնչվում է արժեքային կամ ադվալորային և խառը մաքսատուրքերի կիրառմանը: Իսկ յուրահատուկ մաքստուրքերի չափը, որը գանձվում է ֆիքսված դրամական մեծությամբ ապրանքի միվորի նկատմամբ (կամ

քաշի, ծավալի և այլ քանակական բնութագրիչներից ելնելով), կախված չէ մաքսային արժեքի մեծությունից:

Պայմանագրում ներառված ապրանքների մատակարարման բազիսային պայմաններն իրենց կարևորագույն դերն ունեն մաքսային արժեքի որոշման գործում, և դա է հանդիսանում մաքսային սակագնի հաշվարկման վրա ազդող հաջորդ գործոնը:

Մաքսային արտոնությունների տրամադրման գործում իր ուրույն դերն ունի ապրանքի ծագման երկրի որոշումը: Հարկ ենք համարում հիշեցնել, որ այն ապրանքները, որոնք ներկրվում են Հայաստանի Հանրապետության մաքսային տարածք ԱՊՀ անդամ պետություններից, ազատված են ներմուծման մաքսատուրքերի վճարումից:

Մաքսային սահմանով ներմուծում ազատ շրջանառության համար մաքսային ռեժիմով ապրանքների տեղափոխումն ենթադրում է բոլոր մաքսային վճարների ամբողջական վճարում: Ելնելով ընդհանուր կանոնից

Մաքսային վճարներ = Ներմուծման մաքսատուրքեր + ԱԱՀ + Ակցիզային հարկ + Մաքսավճարներ

Մաքսատուրքը գանձվում է ՀՀ մաքսային օրենսգրքով սահմանված դրույքաչափերով: Այն որոշվում է ապրանքի մաքսային արժեքի նկատմամբ համապատասխան մաքսային դրույքաչափ կիրառելու միջոցով (արժեքային մաքսատուրքով ապրանքի հարկման դեպքում):

Մաքսատուրք = Ապրանքի մաքսային արժեք x Մաքսատուրքի դրույքաչափ (1)

Յուրահատուկ մաքսատուրքով հարկվող ապրանքի մաքսատուրքի մեծությունը որոշվում է հետևյալ բանաձևով.

Մաքսատուրք = Հարկման ենթակա ապրանքների քանակ x Յուրահատուկ մաքսատուրքի դրույքաչափ արտահայտված մաքսային հայտարարագրի ընդունման օրվա դրությամբ ՀՀ ԿՔ կողմից արտարժույթի սահմանված փոխարժեքով (2)

Ըստ հաշվարկման մեթոդի խառը կամ համակցված մաքսատուրքի մեծությունը հաշվարկվում է հետևյալ կերպ.

- առաջին հերթին հաշվարկվում է մաքսատուրքի ադվալորային մեծությունը ըստ (1) բանաձևի,
- երկրորդ հերթին հաշվարկվում է յուրահատուկ մաքսատուրքի մեծությունը ըստ (2) բանաձևի:

Այդ երկու հաշվարկված մեծություններից ընտրվում է առավելագույնը: Վերջինս էլ հանդիսանում է վճարվելիք մաքսատուրքի գումարի մեծությունը:

Մաքսային սահմանով ներմուծում ազատ շրջանառության համար մաքսային ռեժիմով ապրանքների տեղափոխման ժամանակ ԱԱՀ գանձվում է ողջ ծավալով, ԱԱՀ-ի մասին օրենքով սահմանված դրույքաչափերով:

Ներմուծում ազատ շրջանառության համար մաքսային ռեժիմով հայտարարագրված ՀՀ ներմուծվող ենթաակցիզային ապրանքները նույնպես ենթակա են ակցիզային հարկով հարկման Ակցիզային հարկի մասին օրենքով սահմանված դրույքաչափերով:

Ապրանքների հայտարարագրման ժամանակ հաշվարկված մաքսավճարները գանձվում են ՀՀ մաքսային օրենսգրքով սահմանված կարգով:

Օրինակ: Ենթադրենք ՀՀ մաքսային տարածք ներմուծվում է ապրանք, որի մաքսային արժեքը կազմում է 1.000 ԱՄՆ դոլար, իսկ ընդհանուր քաշը 20կգ: Համաձայն ԱՏԳ ԱԱ դասակարգչի մաքսատուրքի դրույքաչափը 10% է, սակայն ոչ պակաս 1կգ համար 1600 դրամը (խառը մաքսատուրք):

Հայտարարագրի ներկայացման օրվա դրությամբ ԱՄՆ դոլարի փոխարժեքը

1դոլար = 410 դրամ

Խնդիր լուծումն իրականացնենք մի քանի փուլով:

1. Հաշվարկենք մաքսային արժեքը ՀՀ դրամով

$1.000 \text{ դոլար} \times 410 \text{ դրամ} = 410.000 \text{ դրամ}$

2. Հաշվարկենք խառը մաքսատուրքի արժեքային մասը.

$410.000 \text{ դրամ} \times 10\% = 41.000 \text{ դրամ}$

3. Հաշվարկենք խառը մաքսատուրքի յուրահատուկ մասը

$20\text{կգ} \times 1600 \text{ դրամ} = 32.000\text{դրամ}$

4. Քանի որ 41.000 դրամը ավելի մեծ է, քան 32.000 դրամը, ապա մաքսատուրքի վճարվող մեծության համար հիմք է ընդունվում հենց արժեքայինով հաշվարկվածը:

5. Որոշենք ԱԱՀ-ի մեծությունը

$\text{ԱԱՀ} = (\text{մաքսային արժեք} + \text{մաքսատուրք}) \times 20\% = (410.000 \text{ դրամ} + 41.000 \text{ դրամ}) \times 20\% = 90.200 \text{ դրամ}$

6.Մաքսավճարներ ենթադրաբար կազմում են 11.000 դրամ

7.Ընդհանուր մաքսային վճարները հավասար կլինեն.

$41.000 \text{ դրամ (Մաքսատուրք)} + 90.200 \text{ դրամ (ԱԱՀ)} + 11.000\text{դրամ (Մաքսավճար)}$

Մաքսային վճարները գումարային արտահայտությամբ կկազմեն. 142.200դրամ

ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսգիրք (հետագա փոփոխություններով և լրացումներով): Ընդունման ամսաթիվը՝ 06.07.2000թ.:
2. «Հարկերի մասին» ՀՀ օրենք (հետագա փոփոխություններով և լրացումներով): Ընդունման ամսաթիվը՝ 14.04.1997թ.:
3. «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենք (հետագա փոփոխություններով և լրացումներով): Ընդունման ամսաթիվը՝ 14.05.1997թ.:
4. «Ակցիզային հարկի մասին» ՀՀ օրենք (հետագա փոփոխություններով և լրացումներով): Ընդունման ամսաթիվը՝ 07.07.2000թ.:
5. «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» ՀՀ օրենք (հետագա փոփոխություններով և լրացումներով): Ընդունման ամսաթիվը՝ 28.12.1998թ.:
6. «Բնապահպանական վճարների դրույքաչափերի մասին» ՀՀ օրենք (հետագա փոփոխություններով և լրացումներով): Ընդունված է 19.04.2000թ.:
- 7 «Ճանապարհային վճարի մասին» ՀՀ օրենք (հետագա փոփոխություններով և լրացումներով): Ընդունված է 03.03.1998թ.:
8. Правовое регулирование таможенных платежей. Москва, 2000. Арутюнян Г.В.
9. Основы таможенного дела. Москва, 1995. Воробьев Ю.А.

10. Основы таможенного дела. Москва, 1998. Драганова В.Г
11. Основы управления и организация в таможенном деле. Санкт-Петербург, 1999. Ершов А.Д.
12. Международные таможенные отношения. Санкт-Петербург, 2000. Ершов А.Д.
13. Таможенные платежи. Москва, 2007. Трошкина Т.Н.
14. Таможенное дело. Москва, 2011. Эриашвили Н.Д.
15. www.customs.am (ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի պաշտոնական կայք):
16. www.arlis.am (Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգ):

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Մաքսային վճարները և դրանց տեսակները.....3
2. Մաքսատուրքի էությունը և տնտեսական բովանդակությունը.....23
3. Մաքսային վճարների հաշվարկման վրա ազդող գործոնները.....43
4. Առաջարկվող գրականություն49

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի
Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ո Ւ Մ Կ Ի Ր Ա Ռ Վ Ո Ղ
Մ Ա Ք Ս Ա Յ Ի Ն Վ Ճ Ա Ր Ն Ե Ր Ը
Դասախոսության տեքստ

Հեղինակ՝ Գյուլասարյան Մ. Ռ.
Մասն. խմբագիր՝ տ.գ.դ., պրոֆեսոր Ա. Սալմազարյան
Գրախոս՝ տ.գ.թ., դոցենտ Ա. Ժամկոչյան

Տպագրված է «Կռունկ տպագրատուն» ՍՊԸ-ում:
ք.Էջմիածին, Մաշտոց 6
Էլ.փոստ՝ krunkprint@gmail.com

Ծավալը՝ 3,023 պայմ.մամուլ, 3,25 տպ. մամուլ:
Չափսը՝ 60x84^{1/16}: Տառատեսակը «Arial Armenian»:
Թուղթը՝ օֆսեթ №1: Տպագրությունը՝ օֆսեթ:
Տպաքանակ՝ 150 հատ: